

10349



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Արամ Մեյմարյան

«19» 09 2024թ



[Handwritten signature]

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 190 - 24

Նախաձեռնող՝

«Բաղրամյան բիլդինգ» ՍՊԸ
ք. Երևան, Բաղրամյան փողոց 37-39

Գործունեությունը՝

Երևան քաղաքի Բաղրամյան 37 հասցեում նախատեսվող
բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցում
Արաբկիր համայնք

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 190 - 24

« 19 » սեպտեմբեր 2024թ.

«Բաղրամյան բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Բաղրամյան 37 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝

«Բաղրամյան բիլդինգ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն
/«Բ» կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան

Ներածական մաս. Բնակելի բազմաֆունկցիոնալ շենքի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում՝ Մարշալ Բաղրամյան 37 հասցեում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա) ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հայտը, 2024 թվականի փետրվարի 7-ին Երևանի քաղաքապետի կողմից տրված №01/50-01-52-24 ճարտարապետահատակագծային առաջադրանքը և անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականները:

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Բաղրամյան փողոց 37 հասցեում գտնվող 01-003-0133-0125 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականության, զբաղեցնում է 0.27369 հա տարածք:

Համալիրի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասերի ընդհանուր մակերեսը՝ 2736.9 քմ,
- կառուցապատման մակերեսը՝ 1097.08 քմ / 41.1 %,
- կանաչապատման մակերեսը՝ 1179.3 քմ / 43,1 %,
- մայթ, ճանապարհ, ճեմուղի՝ 460.52 քմ 16.8 %,
- հարկայնությունը՝ 4 լիարժեք ստորգետնյա հարկ (-13.50-ից -3.60 նիշերում), և 18 լիարժեք վերգետնյա հարկ (0.00-ից +57.90 նիշերում),
- ավտոկայանատեղիների ընդհանուր քանակը (բնակելի սպասարկման)՝ 145 (79.2%)



- ավտոկայանատեղիների ընդհանուր քանակը (հասարակական սպասարկման)՝ 26,
- բնակարանների քանակը՝ 183,
- ավտոկայանատեղերի կառուցապատման մակերեսը (-13.50-ից -3.60 նիշերում)՝ 9000.0 քմ,
- վերգետնյա հարկերի կառուցապատման մակերեսը (առանց տանիք)՝ 22765.58 քմ,
- հասարակական հարկերի օգտագործվող (վաճառվող) մակերեսը՝ 2060.3 քմ,
- բնակելի հարկերի օգտագործվող մակերեսը՝ 14487.5 քմ,
- շին.մակերեսը՝ 32044.98 քմ:

Նախատեսվող շենքն ունենալու է 4 ստորգետնյա հարկով ավտոկայանատեղ՝ ընդհանուր 171 ավտոկայանատեղիով, որից 145-ը սպասարկելու են բնակելի հատվածին՝ ապահովելով բնակարանների 79.2%-ին, իսկ 26-ը հանդիսանալու են հասարակական օգտագործման: Ստորգետնյա ավտոկայանատեղիի մուտքը նախատեսվում է կողային ճակատից՝ 4 հարկանի բնակելի շենքի բակից: Առաջին և երկրորդ հարկերը (համապատասխանաբար 0.00 և + 4.80 նիշերում) հասարակական նշանակության: Երրորդ հարկի (+8.40 նիշում) մի հատվածը լինելու է հասարակական է, մյուս կեսը՝ բնակելի: 4-րդ հարկից սկսած՝ արդեն ամբողջությամբ բնակելի հարկեր են լինելու, իսկ 5-16-րդ հարկերը (+15.00-51.30 նիշերում) տիպային: 17-րդ հարկը նահանջ հարկ է: 18-րդ հարկը (+54.60 նիշում) վերջին՝ պենթհաուսային հարկն է: Բնակելի հատվածում ընդհանուր հաշվով նախատեսված է 1-5 սենյականոց 183 բնակարան:

Հողամասն ազատ է կառուցապատումից, հողատարածքում ծառաթփային բուսականություն բացակայում է: Կառուցապատման ենթակա տարածքում այլ նախագծի շրջանակներում մասնակի իրականացվել են փոստրակի փորման աշխատանքներ: Տարածքը շրջափակված է ծառերով, որոնք դուրս են սեփականության վկայականով սահմանված տարածքից, ծառերի պահպանման համար շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն համապատասխան միջոցառումներ: Նախատեսվող կառույցի հարևանությամբ են գտնվում բնակելի և հասարակական կառույցներ:

Հասարակական կառույցի էլեկտրամատակարարումն իրականացվելու է համաձայն «ՀԷՏ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների: Բնակելի համալիրի էլ. մատակարարումն իրականացնելու համար ավտոկայանատեղիում կնախատեսվի համապատասխան հզորության ենթակայան: Նոր ենթակայանի սնումը հնարավոր է իրականացնել ԲԵ0116- 6 կՎ հատոններից՝ մոնտաժելով 6 կՎ մալուխագծեր:

Բնակելի շենքի ջրամատակարարումն իրականացվելու է համաձայն տրված տեխնիկական պայմանի: Քանի որ շենքը բազմահարկ է, նախատեսվում է ջրամատակարարման գոտիավոր սխեմա երկու գոտիով: Կենցաղային կեղտաջրերն ինքնահոս հեռանալու են բակային ցանց, որը միանում է քաղաքային կոլեկտորին՝ համաձայն տրված տեխնիկական պայմանի: Կոյուղու կանգնակները նախատեսված են հորանների մեջ:

Հասարակական կառույցի գազամատակարարումն իրականացվելու է համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի: Ըստ տրված տեխնիկական պայմանի՝ գազամատակարարումը հնարավոր է իրականացնել ՋՐՎԵԺ ԳԲԿ-ն սնող Dպ=300 մմ տրամագծով կողմնատար գազատարից:

Շինարարության փուլում՝ անիվների լվացման, ջրցանի, բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստեռնով, պայամանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում՝ տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային



բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի N108 որոշման պահանջներին համապատասխան: Կանաչապատման նպատակով տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս, կտնկվեն ծառեր և թփեր: Նախատեսվում է տնկել՝ թղկի սրտատերև կարմիր - 18 հատ, գնդաձև իլենի - 12 հատ, գնդաձև թույա - 9 հատ, բարբարիս - 6 հատ, ասպիրակ - 10 հատ, Ֆորգիցիա - 8 հատ, խենոմելիս - 15 հատ, սամշիտ - 56 գձմ, եղևվնի կովկասյան - 10 հատ, թզուկ վարդեր - 86 քմ, սիզամարգ - 1050 քմ:

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում՝ մոտ 18000 խմ ընդհանուր ծավալով հողային զանգված: Հանվող 15450 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու է 1.5 տ/տարի ծավալով կենցաղային աղբ, որը կտեղափոխվի մոտակա աղբավայր և 120 խմ ծավալով շինարարական աղբ, որն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով,
- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ,
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,
- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակն օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,
- շինհրապարակի ջրցանի համար կօգտագործվեն լավագույն հասանելի տեխնոլոգիաների և աղտոտող նյութերի արտանետումները փոշենստեցնող (փոշեզսպող) թնդանոթ սարքավորումները,
- հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,
- շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում,
- շինարարության ողջ ընթացքում կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում կապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների առկայությունը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ, որի տեխնիկական չափորոշիչները և հասանելիության պայմանները սահմանվում են Երևանի քաղաքապետի որոշմամբ,
- ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և օտոր:



բավականացնի միայն փոշենստեցման համար,

- տարածքի հոսքերը միավորել մեկ բակային ցանցում և միացնել սելավային ջրացանցին: Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն պարզարան, որը նախատեսված է շինարարական հրապարակի տարածքում: Պարզարանում տեղի է կունենա մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր,
- շինարարական նյութերը տեղադրել բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով՝ տարածքներում ապահովվել սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ,
- շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար նախատեսված տարածքում տեղադրել ավագ կամ մանրախիճ՝ այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավագը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով,
- աշխատանքների ավարտից հետո մաքրել բոլոր տարածքները և առաջացած թափոնները տեղափոխել ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը բարեկարգել և մաքրել շինադրից,
- խուսափել մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը,
- աղմկոտ աշխատանքները հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում,
- պարբերաար ստուգել և կարգավորել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին,
- բոլոր մեքենաները ապահովվել համապատասխան խլացուցիչներով:

Բուսականության պահպանման և կառավարման նախագծով նախատեսված է.

- իրականացնել շինհրապարակին կից գտնվող, ազդեցության ենթարկված ծառափային բուսականության պարբերաբար ջրցանման միջոցառումներ՝ բուսականության վրա նստած փոշին հեռացնելու նպատակով,
- անհրաժեշտության դեպքում շին. հրապարակի հարևանությամբ գոյություն ունեցող ծառերը ծածկել թաղանթով:

Բնակելի շենքի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.



- մթնոլորտային օդ արտանետումների (փոշի, CO, NOx) որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով՝ հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 2380000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի նստավայրում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակումներում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել հայտում ամրագրված բնապահպանական պահանջներին և միջոցառումներին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 15-Ն հրամանի և ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի մայիսի 6-ի «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին» N 138 հրամանի պահանջները:
- Մինչև գործունեությունը սկսելն անհրաժեշտ է կատարել հողամասի գործառնական նշանակության փոփոխություն (բնակավայրերի բնակելի կառուցապատման) համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետով սահմանված կարգի:



- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեքներ ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Շինհրապարակի արտաքին տարածքը ժամանակավոր ցանկապատել, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ:
- Շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ՝ փոշու տարածումը կանխող ցանցով:
- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է ապահովել ջրցանի պարտադիր իրականացումը:
- Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Բաղրամյան բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Բաղրամյան 37 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Ներիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Վարդան Հարությունյան